ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-197 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 10.1-րդ հոդվածով.

«*Հոդված 10.1 Ինտերնետային կայքում եւ (կամ) էլեկտրոնային հավելվածում հրապարակման ենթակա տեղեկատվությունը*

1. Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը (էլեկտրոնային առեւտրային հարթակ), որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային պայմանագիր կնքել, պետք է պարունակի՝

1) վաճառողի էլեկտրոնային, փոստային հասցեները եւ հեռախոսահամարը,

2) պայմանագրի ընդհանուր դրույթները եւ պայմանները,

3) ապրանքի կամ ծառայության գինը, բոլոր հարկերը, իսկ առկայության դեպքում՝ առաքման եւ (կամ) այլ ծախսերը ներառյալ վճարման ենթակա ընդհանուր գումարը,
4) տեղեկություն ընդունելի վճարման ձեւի մասին? մինչեւ սպառողի կողմից գնելու գործողությունը սկսելը,

5) էլեկտրոնային ձեւով լրացվող հաղորդագրության հետ կապակցված տվյալների օգտագործման կարգը, որոնց ամբողջությունը համարվում է ձեռագիր ստորագրությանը համարժեք եւ հնարավորություն է ընձեռում նույնականացնել էլեկտրոնային ձեւով ստորագրող անձին ու արտահայտում է վերջինիս կամքը,

6) առաջարկվող պայմանագրի պայմանները համաձայնեցնելիս դրանում փոփոխություններ կատարելու հնարավորությունը եւ կարգը, ինչպես նաեւ մինչեւ օֆերտա կամ ակցեպտ կատարելը անճշտությունները շտկելու եղանակները,

7) նշում ապրանքը վերադարձնելու կամ փոխանակելու սպառողի իրավունքի մասին,

8) բողոքների քննության եւ վեճերի լուծման արտադատական կարգը (հաշտարարություն, արբիտրաժ, մասնագիտական եզրակացություն, անկողմնակալ գնահատում, այդ թվում նաեւ՝ հաճախորդների կողմից վաճառողի ռեյտինգային գնահատման համակարգ եւ այլն), որով պարտավոր է ղեկավարվել վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայություններ մատուցողը):

2. Պայմանագրի պայմանների մասին տեղեկատվությունը ինտերնետային կայքում կամ էլեկտրոնային հավելվածում պետք է ներկայացվի սպառողին մինչեւ պայմանագիրը կնքելը:

3. Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է սպառողին տրամադրի վճարումը կատարելու վերաբերյալ տեղեկություն:

4. Վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայություններ մատուցողը) պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկությունները հասանելի դարձնել սպառողին առավելագույն դյուրին որեւէ եղանակով:

5. Սույն հոդվածի կանոնները կիրառելի են հեռուստատեսային առեւտրի նկատմամբ դրանց առանձնահատկությունները հաշվի առնելով:»

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 23. Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու կամ վերադարձնելու սպառողի իրավունքը*

1. Սպառողն իրավունք ունի վերադարձնել կամ փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը այլ չափի, ձեւի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով այն վաճառողի մոտ, ումից ձեռք է բերել ապրանքը կամ վաճառողի կողմից հայտարարված այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձեւով, եզրաչափքերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի եւ Կառավարության սահմանած անվանացանկով ապրանքների:

Սպառողն իրավունք ունի փոխարինել կամ վերադարձնել պատշաճ որակի ապրանքն իրեն հանձնելու օրվանից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ապրանքը վերադարձնելու ժամկետը համարվում է պահպանված, եթե սպառողն ապրանքը ստանալու օրվանից տասնչորսօրյա ժամկետում այն հանձնել է փոստային, սուրհանդակային, տրանսպորտային կամ առաքման այլ ծառայությանը:

Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում կամ վերադարձվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկանիշները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաեւ սպառողին տրված վճարման փաստը հավաստող փաստաթուղթը կամ այլ հաշվարկային փաստաթուղթ, եւ առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ:

Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը վերադարձնելու կամ փոխարինելու նպատակով վաճառողի գտնվելու վայր հասցնելու հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

2. Պատշաճ որակի ապրանքը չի կարող վերադարձվել այն դեպքերում, երբ.

1) ապրանքների պատրաստումը եւ մատակարարումը իրականացվել է գնորդի հատուկ պահանջներին համապատասխան կամ ապրանքները անհատականացված են, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջեւ կնքված պայմանագրով,

2) մատակարարվում են ապրանքներ, որոնք ունեն արագ փչացման, քայքայման կամ որակի փոփոխության հատկություն, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջեւ կնքված պայմանագրով,

3) կապարակնքված ապրանքների վաճառքի դեպքում, որոնք վերադարձման ենթակա չեն առողջապահական կամ հիգիենիկ նկատառումներից ելնելով եւ որոնք մատակարարվելուց հետո ապակապարակնքվել են գնորդի կողմից,

4) ապրանքների վաճառքի դեպքում, որոնց մատակարարումից հետո, իրենց բնույթից ելնելով, անքակտելիորեն միախառնվում են միմյանց հետ, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջեւ կնքված պայմանագրով,

5) կապարակնքված ձայնային կամ տեսաձայնային ձայնագրության կամ կապարակնքված ծրագրային ապահովման մատակարարման դեպքում, որոնք մատակարարելուց հետո ապակապարակնքվել են գնորդի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջեւ կնքված պայմանագրով,

6) թերթերի, ամսագրերի, գրքերի կամ այլ տպագիր նյութերի մատակարարման դեպքում,

7) աճուրդում կամ բորսայում կնքված պայմանագրերի դեպքում,

8) թվային կրիչի վրա չմատակարարվող թվային բովանդակության մատակարարման դեպքում, երբ դրա կատարումը սկսվել է սպառողի անվերապահ նախնական համաձայնությամբ, համաձայն որի՝ սպառողն այդպիսով կորցնում է իր վերադարձման իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջեւ կնքված պայմանագրով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ 134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով՝

«3. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով իրականացվող առեւտրի եւ ծառայությունների հետ կապված հարցերը կարգավորվում են Օրենքի 4.1 գլխով: Օրենքի 4.1 գլխի կանոնները կիրառելի են հեռուստատեսային առեւտրի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ եթե նշված կանոնների կիրառումը չի հակասում դրա էությանը:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հոդված 15.1. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առեւտուր եւ ծառայություն իրականացնելիս ներկայացվող պահանջները

1. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առեւտուր կամ ծառայություն իրականացնելիս գնորդին պետք է հասանելի լինի հետեւյալ տեղեկատվությունը՝

1) պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ գործողությունների հաջորդականությունը, այդ թվում՝ օֆերտա կամ ակցեպտ համարվող գործողության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն, որը պետք է պարունակի բավարար ու որոշակի տեղեկություններ պայմանագիրը կնքված համարվելու պահի մասին, ինչպես նաեւ տեղեկատվություն այն գործողության մասին, որն առաջացնելու է վճարման պարտականություն,

2) գնորդի նշած վայր ապրանքի առաքման (աշխատանքի կատարման, ծառայության մատուցման) սահմանափակումները՝ մինչեւ գնորդի կողմից ապրանքը գնելու գործողությունը սկսելը,

3) ապրանքի փոխանակման կամ վերադարձման պահանջների հետ կապված տեղեկությունները,

4) կայքի շահագործման հասանելիության սահմանափակումները՝ դրանց առկայության դեպքում,

5) կայքի շահագործման՝ սարքավորումների կամ ծրագրային ապահովման հետ համատեղելիության կամ փոխգործակցության սահմանափակումները, որի մասին տեղյակ է կամ ողջամտորեն պետք է տեղյակ լինի վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայություններ մատուցողը),

6) բողոքների քննության եւ վեճերի լուծման արտադատական կարգի հասանելիությունը,

7) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր այլ տեղեկատվություն:

2. Ինտերնետային կայքում կամ էլեկտրոնային հավելվածում (էլեկտրոնային առեւտրային հարթակում) կարող է հղում նախատեսվել մեկ այլ էլեկտրոնային փաստաթղթի, որը պարունակում է կնքվող պայմանագրի պայմանները: Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է ապահովի տվյալ հղման տեխնիկական հասանելիության կարգն ու ժամկետները:

3. Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է հնարավորություն ընձեռի գնորդին պահպանել կնքված պայմանագիրը կամ պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան պայմանագրի կատարումը սկսելը՝ այն այլ կերպով հասանելի դարձնել կողմին:

4. Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առեւտրային հարթակի միջոցով ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված լինելու (հարկ վճարողի հաշվի համար ունենալու) եւ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առեւտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առեւտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: